ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2016 թվականի N 87 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1381-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2016 թվականի 3-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դեբեդավան, Դեղձավան, Արճիս, Լճկածոր, Բերդավան և Դովեղ համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության

բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

23 հունիսի 2016թ.

ք. Իջևան

Հավելվածը
Հաստատված է
ՀՀ Տավուշի մարզպետի
23 հունիսի 2016թ. թիվ 87 - Ա որոշմամբ

2016 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դեբեդավան, Դեղձավան, Արճիս, Լճկաձոր, Բերդավան և Դովեղ համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

Հ/հ	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Դեբեդավան	3-րդ եռամսյակ	բնապահպանություն,արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, հողաշինություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Գևորգյան Գագիկ Մատինյան Համլետ Փիրումյան Աշոտ Մարդանյան
2.	Դեղձավան		բնապահպանություն, արտակարգ իրավիճակներ, առևտուր, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, հողաշինություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Գագիկ Մատինյան Աշոտ Մարդանյան Համլետ Փիրումյան Գուրգեն Հարությունյան

3.	Արճիս		բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան
4.	Լճկաձոր		բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ, ֆինանսներ	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Ժորա Խաչատրյան Գագիկ Մատինյան
5.	Բերդավան		բնապահպանություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ, առևտուր	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան Գուրգեն Հարությունյան
6.	Դովեղ		բնապահպանություն, Ֆինանսներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Ժորա Խաչատրյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԴԱՎԹՅԱՆ